ԴԾ-ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ 24.08.2015

« Հաստատում եմ »

Երևանի Անանիա Շիրակացու
անվան ճեմարանի

Տնօրեն ---------- Աշոտ Ալիխանյան

24.08.2015թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՃԵՄԱՐԱՆ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Լեզուների ուսուցման քաղաքականություն

Սույն փաստաթուղթը սահմանում է ճեմարանի ավագ դպրոցում (ԴԾ) լեզուների դասավանդման փիլիսոփայությունը, հիմնական մոտեցումները և փոխհամաձայնությունները

Լեզուների ուսուցման գաղափարախոսությունը և գործածությունը

Լեզվունների ուսուցման փիլիսոփայությունը

➢ Լեզուների ուսուցումը ավագ դպրոցի սաներին պատրաստում է բազմալեզու միջավայրում երկու և ավելի լեզվով ազատորեն հաղորդակցվելու, այլ մշակույթ կրող անձանց հանդեպ հարգանք և հանդուրժողականություն դրսևորելու և ազատորեն համագործակցելու համար:

➢ Ուսուցման գործընթացը ներառում է.

- ***լեզվի կիրառական ուսուցում***, երբ սովորողները լեզուն կիրառում են առօրյա կյանքում՝ դիմացինին լսելու, հասկանալու, հաղորդակցվելու, սեփական մտքերը, հույզերը հաղորդելու, դիմացինին ինչ-որ բան տվյալ լեզվով սովորեցնելու, իր ձեռքբերած փորձը հաղորդելու նպատակով,

ուսուցում լեզվի մասին, երբ սովորողները խորացնում և ամրապնդում են ձեռք

- բերած լեզվական գիտելիքները, տարբեր լեզուներով գրված տեքստերի ոճական, ժանրային առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ ուսումնասիրություններ են իրականացնում,
- ***ուսուցում լեզվի միջոցով,*** երբ սովորողները լեզուն կիրառում են որպես մտածելու, տեղեկատվություն քաղելու, կուտակված փաստերը քննարկելու, վերլուծելու, տարբեր առարկաներից և գիտական ոլորտներից բազմաբնույթ թեմաներով զեկուցումներ գրելու, լսարանի առջև ելույթ ունենալու և ունկնդիրներին սեփական հետազոտական աշխատանքի արդյունքները հաղորդելու միջոց:

➢ Յուրաքանչյուր առարկայի ուսուցիչ նաև լեզվի ուսուցիչ է և պատասխանատվություն է կրում սովորողների լեզվական կարողությունների ու լեզվի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման հարցում:

➢ Լեզուների ուսումնառությունը շարունակական բնույթ է կրում և իրականացվում է ողջ կյանքի ընթացքում:

➢ Լեզուների դասավանդման պլանավորումը իրականանում է եռակողմ համագործակցության միջոցով. այս գործընթացին մասնակցում են ուսուցչամանկավարժական անձնակազմը, սովորողները և նրանց ծնողները: Գործընթացը ներառում է.

- սանի լեզվական կարողությունների նկարագրություն.
- տվյալ փուլում լեզվական գիտելիքների և հետագա ակնկալիքների թվարկում՝ մասնավորապես միջին և ավագ դպրոցների միջև դասավանդման առնչությունները և շարունակականությունն ապահովելու հարցում.

- նպատակների կամ խնդիրների սահմանում՝ համաձայն պետական չափորոշչի, ՄԲ-ի (IB) պահանջների, ինչպես նաև սովորողների անհատական հետաքրքրությունների և հետազոտական աշխատանքի իրականացման լեզվի ընտրության. այս դեպքում տվյալ առարկայի ուսուցիչը նաև լեզվի ուսուցիչ է, որն օգնում է սովորողին ճիշտ

ձևակերպելու իր մտքերը, կառուցելու ավարտական գրավոր աշխատանքը (էսսե)՝ դրսևորելով համապատասխան լեզվական հմտություններ.

- ինքնուրույն ուսումնառության պլանավորում, այդ թվում՝ իրականացնելիք նպատակների ինքնուրույն որոշում, դիդակտիկական և ուսումնական նյութերի ընտրություն, լեզվական կարողությունների ինքնազարգացում և ինքնագնահատում:

➢ Լեզուների ուսուցումն իրականացվում է խմբերով.

Առաջին խմբի լեզուներ (Language A)

➢ Ճեմարանի ավագ դպրոցում ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական լեզվով՝ հայերենով: Ավագ դպրոցի Դիպլոմային ծրագրում հայ ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել գրականություն՝ առաջին խմբի լեզվով՝ հայերենով (Armenian A: Literature): Բացի դրանից՝ Դիպլոմային ծրագում առաջարկվում է ուսումնասիրել գրականություն նաև անգլերենով (English A: Literature) և ռուսաց լեզվով (Russian A: Literature), որոնք այս դեպքում կդիտարկվեն որպես ուսումնառության առաջին լեզու: Ուսանողներին նաև այլ լեզուներ ինքնուրույնաբար ուսումնասիրելու հնարավորություն կտրվի:

Ավագ դպրոցի բոլոր սովորողների համար հայերենի ուսուցումը պարտադիր է:

Մայրենի լեզվի՝ հայերենի/անգլերենի/ռուսերենի ուսուցումն ապահովում է.

1. Բանավոր և գրավոր խոսքի միջոցով, սեփական մտքերը, հույզերն արտահայտելուն, մարդկանց հետ հաղորդակցվելուն, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալուն.
2. բնության, հասարակության և մարդու մասին գիտելիքներ ստանալուն, հայերենով ստեղծված գրական-գեղարվեստական ստեղծագործությունները կարդալուն և գնահատելուն, ազգային (հայկական/ռուսական/անգլիախոս երկրների/ մշակույթը, նախնիների ստեղծած հոգևոր մշակույթը արժևորելուն.

3. սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելուն և զարգացնելուն, գրական երկերից սովորածի, նշանավոր մարդկանց կյանքի օրինակով ինքնակրթության, ինքնադաստիարակության, ինքնակատարելագործման ձգտելուն.

- համագործակցության ընթացքում:
- Դիպլոմային ծրագրում, ըստ նախընտրության, առաջարկվում է ուսումնասիրել անգլերեն, ռուսերեն, գերմաներեն կամ ֆրանսերեն: Սկսնակների համար առաջարկվում է նաև ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն լեզուների ուսուցման հատուկ դասընթաց (Language ab initio):
- Լեզուների ամբիոնները մշակում են դասավանդվող լեզվի չափորոշիչներն ու ծրագրերը, իրականացնում են աշխատանքի համատեղ պլանավորում և վերլուծություն: Հաշվի է առնվում ուսումնական նյութի բովանդակության պլանավորման ուղղահայաց և հորիզոնական սկզբունքը:
- Լեզվի ուսուցիչները սովորողներին օգնում են բարելավելու իրենց լեզվական հմտությունները՝ ՄԲ սովորողի նկարագրին համապատասխան:
- Լեզուներ դասավանդող ուսուցիչներն օժանդակում են սովորողների լեզվական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանը, խթանում ՄԲ սովորողի որակների ձևավորումն ու վերաբերմունքի դրսևորումը:
- Դասավանդվող բոլոր լեզուները բավարարում են համընդհանուր մոտեցումների /գլոբալ կոնտեքստ/ պահանջները և լայն հնարավորություններ են ստեղծում օգտվելու այդ լեզուներով առկա գրականությունից:
- Դասավանդվող բոլոր լեզուների ուսումնական ծրագրերն և դիդակտիկ նյութերը մշակվում և ստեղծվում են միասնական մոտեցումներով՝ հաշվի առնելով համընդհանուր կապերը:
- Լրացուցիչ լեզվի իմացությունը խթանում է և հնարավորություն է տալիս վայելելու ստեղծագործական և մտավոր գործունեությունը:

Լեզուների դասավանդման խնդիրները

- լեզվաքերականական գիտելիքների ձեռքբերում և դրանց կիրառական-գործնական յուրացում.
- տվյալ լեզվին հատուկ մտածողության զարգացում և շարունակական կատարելագործում.
- այլ մարդկանց հետ տվյալ լեզվի բանավոր և գրավոր տեսակներով ազատորեն շփվելու և հաղորդակցվելու կարողության կատարելագործում.
- լեզվի միջոցով համագործակցության հասնելու կարողության զարգացում.
- քննադատական-տրամաբանական մտածողության զարգացում.
- հուզակամային ոլորտի և երևակայության զարգացում.
- խոսքի միջոցով ինքնակառավարման, ինքնահսկման, ինքնագնահատման կարողությունների զարգացում.
- տարբեր մշակույթներին առնչվելու, դրանք գնահատելու և արժևորելու կարողության զարգացում.
- սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունների զարգացում.
- լեզվակիր երկրների և ժողովուրդների քաղաքակրթությանը, մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և առաջին խմբի նախընտրած լեզվով արտահայտելու, այլ ժողովուրդներին մատչելի դարձնելու հիմնական կարողությունների և հմտությունների զարգացում.
- օտար լեզուների ճանաչողական և հաղորդակցական հնարավորությունների կարևորում, տվյալ օտար լեզուն ներկայացնող ժողովրդի մշակույթի նկատմամբ հարգանքի դրսևորում:

Հատուկ կարիքներ կամ աջակցություն

➢ Ծրագրային լուրջ բացթողումների, հատուկ աջակցության անհրաժեշտության դեպքում, ուսուցչի խորհրդով և ծնողի համաձայնությամբ, սանի հետ կազմակերպվում են լրացուցիչ կամ անհատական պարապմունքներ:

Կազմակերպչական աշխատանք

- Լեզուների դասավանդման քաղաքականությունը ներկայացնող փաստաթուղթը տեղադրվում է Ճեմարանի կայքում և հասանելի է ողջ համայնքին:
- Ճեմարանի տնօրենությունը, համակարգողները և ուսուցիչները պատասխանատու են լեզուների դասավանդման քաղաքականության իրականացման համար:
- Ավագ դպրոցում լեզուների դասավանդման քաղաքականությունը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում: Քննարկումը իրականացնում է Ճեմարանական համայնքը (ուսուցչական, ծնողական և աշակերտական), իսկ փաստաթուղթը հաստատվում է տնօրենության խորհրդի նիստում:

Հավելված

Լեզուների ուսուցումն օգնում է ուսուցիչներին հնարավորինս բացահայտելու յուրաքանչյուր սովորողի պահանջները և բարձրացնելու դասավանդման մակարդակը: Լեզուների ուսուցման գործընթացում կիրառվում են բազմազան տեխնոլոգիաներ և ժամանակակից մեթոդներ, որոնք խթանում են սովորողների ինքնուրույնությունը, քննադատական միտքի դրսևորումը, սոցիալական և հաղորդակցական, միջմշակութային և միջլեզվական կարողությունների զարգացումը և խթանումը:

Ճեմարանում գործում են լեզուների կամընտրական խմբակներ և ակումբներ, որտեղ սաները, ուսուցիչները, ծնողները իրենց ընտրությամբ ուսումնասիրում են այս կամ այն լեզուն, հաղորդակցվում են տարբեր մշակույթների և քաղաքակրթությունների:

Լեզուների դասավանդման սկզբունքները և մեթոդները

Լեզուների դասավանդման հիմնական սկզբունքները

- ***Ճեմարանի ավագ դպրոցում դասավանդվող բոլոր լեզուների միասնական և հորիզոնական պլանավորում.*** սա հնարավորություն է տալիս ստեղծելու լեզուների դասավանդման միասնական ծրագրերի փաթեթ, որը կապահովի ընդհանրությունը,

տարբեր լեզուների առնչությունների և կապերի շեշտադրումը, պահանջների, կիրառվող տեխնոլոգիաների և մեթոդների միասնականությունը.

- ***Համագործակցության, հաղորդակցման ապահովում.*** տարբեր լեզուներով հաղորդակցվող և ստեղծագործող ուսուցիչների միասնական ստեղծագործական աշխատանքը սաներին մղում է լեզուներ սովորելու, դրանց միջոցով հաղորդակցվելու և համագործակցելու ոչ միայն ճեմարանի դասընկերների, ուսուցիչների, այլ նաև տարբեր երկրների իրենց հասակակիցների և մեծահասակների հետ.
- ***Գործնականության և լեզվական համապատասխան միջավայրի ստեղծում.*** ճեմարանի ավագ դպրոցում բոլոր լեզուների դասավանդումը գործնական-կիրառական բնույթ է կրում, քերականական օրենքները և օրինաչափությունները միջոց են սանի բանավոր և գրավոր խոսքի զարգացման համար. սա ապահովելու համար կիրառվում են դերային և դիդակտիկական զանազան խաղեր, ստեղծվում են լեզվական համապատասխան իրավիճակներ և որոշակի միջավայր՝ սանի լեզվական կարողությունների դրսևորման համար.
- ***Պատանու ընդհանուր զարգացման ապահովում.*** լեզուների ուսուցումը նպաստում է պատանու ընդհանուր զարգացմանը. ընտրված գրական և ոչ գրական նյութերը, լեզվական վարժությունները, տեքստային առաջադրանքները այնպես են կազմվում, որ զարգացնեն սանի քննադատական և պատկերավոր մտածողությունը, տրամաբանությունը, երևակայությունը, միջմշակութային կապերը լեզվի միջոցով ընկալելու և արժևորելու կարողությունը.
- ***Հետազոտելու, ստեղծագործելու դրդապատճառների մշակում.*** սանը լեզուների իմացության շնորհիվ տարբեր տպագիր և էլեկտրոնային աղբյուներից իր ուսումնասիրած լեզուներով փաստեր, տեղեկություններ է քաղում, դրանք խմբավորում, դասդասում է, տվյալ երևույթը քննում և մեկնաբանում է, ապա ձևակերպում է սեփական տեսակետը, ինքնուրույն եզրահանգումներ է կատարում.
- ***Ինքնակրթության, ինքնուրույն աշխատանքի խթանում.*** լեզուներ սովորելով, լեզվական տարբեր մշակույթների հաղորդակցվելով՝ աշակերտը սովորում է օգտվել

տարբեր լեզուներով տպագիր և էլեկտրոնային գրականությունից և պաշարներից, ինքնուրույնաբար գիտելիք ձեռք բերել, ինչպես նաև կառավարել իր վարքը, դրսևորել հանդուրժողականություն և հարգանք այլ մշակույթի ներկայացուցիչների և նրանց կարծիքների հանդեպ:

Լեզուների դասավանդման տեխնոլոգիաները, մեթոդները և ձևերը

Լեզուների դասավանդման գործընթացում կիրառվում են հետևյալ ***տեխնոլոգիաները***՝

- *համագործակցային.* ուսուցումը կառուցվում է աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-աշակերտ, աշակերտներ-ուսուցիչներ փոխհարաբերությունների հիման վրա.
- *նախագծային.* սաները կազմում են որոշ հետազոտական նախագծեր, որոնց իրականացման ընթացքում օգտվում են զանազան աղբյուրներից՝ տարբեր լեզուներով գրված տպագիր և էլեկտրոնային նյութերից.
- *մոդուլային.* սովորողի ինքնուրույնությունը խթանելու համար հաճախ ուսուցիչը նյութի ուսուցումը կազմակերպում է համապատասխան մոդուլներով՝ սովորողին ներկայացնելով լեզվաքերականական տեսական նյութը, համապատասխան տեքստը, ինչպես նաև կցելով ցուցումներ աշխատանքը կատարելու մասին և նյութի ինքնուրույն յուրացման գործնական առաջադրանքներ և վարժություններ.
- *տարբերակված մոտեցման.* առանձնացվում են լեզվական տարբեր հմտություններ ունեցող աշակերտները, կազմվում են տարբերակված ծրագրեր և սաների հետ աշխատում են ըստ լեզվի տիրապետման աստիճանի և մակարդակի.
- *ավանդական-վերարտադրողական.* կիրառվում է հիմականում այլ տեխնոլոգիաների զուգակցությամբ, հատկապես մոդուլային և տարբերակված տեխնոլոգիաների հետ.

Լեզուների դասավանդման գործընթացում կիրառվում են հետևյալ մեթոդները.

- *խաղային.* դերային խաղեր, դիդակտիկական խաղեր, լեզվական և խոսքային զանազան խաղեր, խաղ-վարժանքներ. լեզվի ուսումնառության ընթացքում ստեղծում են

որոշակի խոսքային միջավայր և դրական վերաբերմունք. լեզվական տարաբնույթ խաղեր մշակում և լսարանում անցկացնում են հենց իրենք՝ սաները.

- *տեքստային աշխատանք.* հանգամանալից աշխատանք տեքստի լեզվառճական, բովանդակային առանձնահատկությունների, բառապաշարի, պատկերավորման միջոցների ընկալման և սեփական քննադատական կարծիքի ձևավորման ուղղությամբ.
- *կարծիք կարդացած, ուսումնասիրած նյութի շուրջ.* տեքստային համակողմանի աշխատանք իրականացնելուց հետո սեփական ինքնուրույն քննադատական գրական-լեզվական եզրակացության շարադրում.
- *բառապաշարի հարստացման աշխատանքներ.* ինքնուրույնաբար կամ զույգերով աշխատելով՝ կազմում են բացատրական, հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների երկլեզու կամ եռալեզու բառարաններ.
- *բեմականացում.* գրական-գեղարվեստական երկի կամ դրա մի հատվածի համար բեմագրի (սցենար) ստեղծում, երկխոսությունների, մենախոսությունների կառուցում և բեմականացում.
- *էքսկուրսիաներ, ուսումնական դասեր թանգարաններում, ցուցասրահներում.* սաները հանդես են գալիս որպես ուղեկցող կամ գիդ և ներկայացնում են տվյալ ցուցադրությունը կամ պատմական վայրը. մենախոսական ելույթ.
- *հարցազրույցներ.* հարցերի կազմում և երկխոսություն, լրագրային ակնարկ կամ հոդված.
- *Գովազդներ և կայքեր.* գովազդում են տարբեր ապրանքներ, գրառումներ են կատարում կայքում, ելույթ են ունենում տարբեր լեզուներով:
- *Թարգմանություններ.* ուսանողները թարգմանում են տարբեր ժանրերի եւ ոճերի աշխատանքները, պատրաստում երկլեզու բառարաններ.

Ավագ դպրոցում ուսուցանվող լեզուների ծրագրերը պետք է ներառեն՝

1) քերականական հիմնական կանոնների ու օրինաչափությունների, ոճաբանական սկզբունքների պահպանմամբ բանավոր և գրավոր խոսք կառուցելու սկզբունքներ,

2) գրական-գեղարվեստական, գիտահանրամատչելի տեքստերում հանդիպող բառերի նշանակության բացատրություն, տարբեր լեզուների բառակազմության հիմնական օրինաչափությունների իմացություն,

3) տարբեր ազգերի բանահյուսական նմուշների, ճանաչված գրողների և նրանց ստեղծագործությունների իմացություն,

4) գրականագիտական խորը գիտելիքներ (գրական ուղղություններ, գրական ժանրեր, պատկերավորման միջոցներ),

5) ինքնուրույն հետազոտական աշխատանքի կազմակերպման, երևակայության և պատկերավոր մտածողության զարգացմանը նպաստող աշխատանքներ,

6) տվյալ լեզվով հաղորդակցվելու համար հարուստ բառապաշար,

7) գիտելիքներ լեզվակիր ժողովրդի հիմնական տոների, սովորույթների, հանրահայտ մարդկանց, արվեստի և գրականության նմուշների մասին:

Աղբյուրներ

- ՀՀ Օրենքը լեզվի մասին
- Հանրակրթության պետական չափորոշիչ. armedu.am aniedu.am
- Հանրակրթական ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության առարկայական
- չափորոշիչ և ծրագիր. armedu.am aniedu.am
- Դպրոցում լեզվական քաղաքականության մշակման ուղեցույց, IBO
- Միջազգային Բակալավրիատի ծրագրերում օտար լեզվով ուսուցման իրականացում